



Գ.ԱՆԴԵՐՍԵՆ

ԿԱՅՈՒՆ ԱՆԱԳԵ ՋԻՆՎՈՐԻԻԿԸ

ԴԵՍԿՏ 1937
ՅԵՐԵՎԱՆ

839.81Լ

ԱՆԴԵՐՍԵՆ

30 MAY 2011

Ա-58

1044 սյ.

1010
42065

ԿԱՅՈՒՆ

ԱՆԱԳԵ ԶԻՆՎՈՐԻԿԸ


Ռուսերենից արգմ. Հ. Տ. ԱՎԱԴՅԱՆ

Նկարներ Գ. ՆԵԿՆԵՆԻ

42065

ՊԵՏԶՐԱՏ

ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱ-ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ 1937



11 FEB 2013

✓ [REDACTED]

Տեխն. խմբագիր՝ Լ. Ոհանյան
Սրբագրիչ՝ Ռ. Նսանյան

Գլավիճի լիազոր Ա.—1145, հրաճ. 3890

Պատվեր 1221, Տիրաճ 3000

Պետհրատի տպարան, Յեքեվան, 11 Կոնոնյանցի, 4



Ժամանակով աշխարհիս լերեսին ապրում ելին քսան-հինգ հատ անագե զինվորիկներ։ Նրանք բոլորն ել հարազատ լեղբայրներ ելին,—նրանց մալրը հին անագե գդալն եր։ Նրանցից յուրաքանչյուրը մի հրացան ուներ ուսին դրած, նալում եր ուղիղ իր առջև և հագել եր կապույտ-կարմիր շքազգեստ — մի հիանալի շքազգեստ։

«Անագե զինվորիկներ» — ահա առաջինը, վոր նրանք լսեցին, լերբ բացվեց տուփը, վորտեղ նրանք թաղնված ելին։ Այսպես բղավեց, ծափ տալով, փոքրիկ տղան։ Նրա ծննդյան օրն եր, զինվորիկներին նվիրեցին նրան և նա իսկույն սկսեց շարել նրանց սեղանի վրա։ Յուրաքանչյուր զինվորիկը, վորպես ջրի լերկու կաթիլներ, նման եր մլուսին, միայն նրանցից մեկը տարբերվում եր իր լեղբայրներից՝ նա միայն մի վոտք ուներ։ Նրան ձուլեցին վերջում և լերկորդ վոտքի համար անագը հերիք չարեց։ Բալց նա նույնքան ամուր եր կանգնած մեկ վոտքի վրա, վորքան և մլուսները լերկու վոտքի վրա։

Այն սեղանին, վորտեղ տղան շարում եր զինվորիկներին, կալին և բազմաթիվ ուրիշ խաղալիքներ։ Բալց բոլոր խաղալիքներից ամենալավը հրաշալի կարտոնե գլխակն եր. — փոքրիկ լուսամուկներով կարելի լեր ներս նալել։ Դղլակի առջև, փոքրիկ հալելու շուրջը, վոր պատ-

կերացնում եր մի լիճ, բանում ելին ծոռեր: Լճի վրա լողում ելին մոմե կարապետներն ու հիանում իրենց արտացոլումով: Ամեն ինչ չափազանց լավ եր, բայց բոլորից ավելի լավը փոքրիկ աղջիկն եր, վոր կանգնած եր շեմքին, դղյակի բաց դռների մեջ: Նա ել կտրված եր կարտոնից: Նրա վրա կար նրբագույն բառիստից շրջադրեստ և նեղլիկ լեռկնագույն ժապավենիկը շեղակի իջնում եր մի ուսից դեպի գոտիկը: Ժապավենն ամրացված եր աղջկան՝ իր լեռեսի մեծության մի փայլուն վարդակով: Աղջիկը պարուհի եր: Նա պարզեւ եր առաջ լեռկու ձեռքը և ալնքան եր բարձրացրել մի վոտքը, վոր անագե զինվորիկն սկզբում բոլորովին չնշմարեց ալն և մտածեց, վոր աղջիկը, ինչպես և ինքը, մի վոտք ունի միայն:

«Ահա ինձ համար մի հարմար կին,—մտածեց նա: Բայց միայն, գուցե, չափազանց բարձր ե նա. նա ապրում ե դղյակում, իսկ յես տուփի մեջ, և ալն ել ալդ տուփի մեջ քսանհինգ հոգի յենք: Նստեղ նրա տեղը չի»: Յեվ նա ամբողջ լեռկարուծյամբ ընկավ ծխախոտի տուփի լեռեւ սեղանի վրա, խաղալիքների արանքում: Այստեղից նա կարող եր անընդհատ նայել սիրունիկ փոքրիկ պարուհուն, վոր շարունակում եր կանգնել մի վոտքի վրա:

Յերեկոյան բոլոր մյուս զինվորիկներին պառկեցրին տուփի մեջ, և տանը մարդիկ պառկեցին քնելու: Հիմա խաղալիքներն սկսեցին ինքները՝ խաղալ—հյուր ելին գնում իրար մոտ, պատերազմ ելին մղում և լեռեկուծ սարքեցին: Անագե զինվորիկները շարժվեցին տուփի մեջ—նրանք ել ելին ուզում մասնակցել խաղին, բայց չելին կարողանում կափարիչը բարձրացնել: Շրխկանը գլխկոնձի լեռ տալիս, իսկ քարեգրիչն սկսեց վազ տալ քարետախտակի վրա: Այնպիսի աղմուկ բարձրացավ, վոր դեղձանիկն արթնացավ ու նույնպես խոսեց, ալն ել վոտանավորներով: Տեղներից չելին շարժվում միայն անագե զինվորիկն ու պարուհին: Պարուհին ուղիղ կանգնել եր վոտքի ձգված ծալրին և լեռկու ձեռքը պարզել եր առաջ:



Ձինվորիկն ել նույնպես ամուր կանգնել եր իր մի փոքրիկ վրա և վոչ մի բույս աչքը չեր հեռացնում նրանից։

Ուղիղ ժամը տասնյերկուսին ինչ վոր բան շրխկաց։ Դա շրխկալով բացվեց ծխախոտի տուփը, բայց նրա մեջ ծխախոտ չկար, այլ նստած եր մի փոքրիկ սև բոբո—դա ալսպիսի մի ֆոկլոս եր։

—Անագե զինվորիկ, — ասաց բոբոն։ — Հերիք ալդպես չուես աչքերդ։

Բայց անագե զինվորիկը ձևացրեց, իբր թե չի լսում։

— Դե սպասիր մի դեռ, — ասաց բոբոն։

Առավոտը բացվեց, լերեխաները վեր կացան, և նրանցից մեկը անագե զինվորիկին դրեց լուսամուտը։ Յեվ ահա—բոբոն եր ալդ բանի պատճառ՝ թե միջանցիկը—լուսամուտը հանկարծ բացվեց և զինվորիկը գլխիվայր ցած նետվեց լերրորդ հարկից։ Մի ակնթարթում նա արդեն ներքևումն եր։ Գլուխը սաղավարտով ու հրացանը խրվեցին սալահատակի քարերի արանքը, փոքրը ցցվել եր դեպի վեր։

Աղախինն ու փոքրիկ տղան իսկույն վազեցին փողոց, փորոնեցին, փորոնեցին զինվորիկին, քիչ եր մնում վոր փոքրը կոխելին վրան, բայց և ալնպես չնշմարեցին։ Յեթե զինվորիկը կանչեր՝ «Յես ալստեղ եմ», նրանք, իհարկե, կգտնելին նրան, բայց նա անքաղաքավարութուն եր համարում բղավել փողոցում, մանավանդ վոր ինքը շքազգեստով եր։

Հանկարծ անձրև լեկավ, վոր քանի գնում սաստկանում եր և, վերջապես, սկսեց հեղեղի պես լցնել։ Յերբ անձրևը կտրվեց լեկան լերկու փողոցալին տղաներ։

—Տես, — ասաց նրանցից մեկը, — հրեն պառկած ե մի անագե զինվորիկ։ Արի ուղարկենք նրան նավորդերու։

Յեվ նրանք սարքեցին լրագրից մի նավակ, դրին նրա մեջ անագե զինվորիկին, ու բաց թողին ջրատար առվով դեպի ներքև, իսկ իրենք վազում ելին լեզրով ու ծափ տալիս Ի՞նչ ալիքներ ելին տարածվում առվի վրա։



Ինչպես եր գնում նավակը, և ինչ փառավոր անձրե եր
գալիս: Նավակը վեր ու վայր եր լինում և չերբեմն ալն-
պես պտտվում, վոր անագե գինվորիկը ցնցվում եր, բայց
նա կայուն եր և միշտ նույնքան անվրդով նայում եր
առաջ, հրացանն ուսին պահած:

Ահա նավակը լողաց կամրջակի տակով: Յեվ այնպես
մթնեց, ինչպես լինում եր տուփի մեջ:

«Ես վորտեղ ընկա լես,— մտածում եր անագե գինվո-
րիկը:— Ես բոլորը բոբոյի արարքներն են: Այ, լեթե ինձ
հետ ալստեղ նստած լինեի փոքրիկ պարուհին, այն ժամա-
նակ թող չերկու անգամ ավելի մութ լինեի»:

Նույն բոպելին չերևաց մի հակալական ջրալին առ-
նետ, վոր վաղուց ապրում եր կամրջակի տակ:

— Ցույց տուր անձնագիրդ, — բղավեց առնետը: — Տուր
եստեղ անձնագիրդ:

Բայց անագե գինվորիկը լուռ եր և ել ավելի ամուր
սեղմում եր հրացանն ուսին: Ոյ, ինչպես եր առնետը
կրճատացնում ատամներն ու բղավում հանդիպող տաշեղ-
ներին ու ծղոտներին՝

— Բռնեք նրան, բռնեք: Նա մաքս չի վճարել, անձ-
նագիրը չի ցույց տվել:

Իսկ հոսանքը քանի գնում ուժեղանում եր, անագե
գինվորիկն արդեն լույս եր նշմարում կամրջակի վերջում,
բայց դրա հետ միասին նա մի այնպիսի սարսափելի
աղմուկ լսեց, վոր ամենաքաջը նույնիսկ կվախենար:
Մտածելու բան եր արդյոք՝ այնտեղ, վորտեղ վերջանում
եր կամրջակը, առուն գահավիժում եր մեծ ջրանցքի մեջ:
Անագե գինվորիկը լենթարկվում եր նույնպիսի վտանգի,
ինչպես և մենք, չերբ մենք սլանում ենք նավակով դե-
պի մեծ ջրվեժ:

Ահա նա արդեն հասել ե լեզրին: Կանգ առնելու
հնարակորուժուն չկար, նավակը դուրս լողաց կամրջակի
տակից: Խեղճ գինվորիկը դիմանում եր և իրեն պահում
ելի այնպես ուղիղ, վոր վոչ վոք չեր նկատի վորևե



փոփոխութիւնն նրա լերեսին: Նավակը լերեք-չորս շրջան գործեց, լցվեց ջրով մինչև լեզրերն ու սկսեց իջնել ջրի տակ: Զուրը հասնում եր անագե զինվորիկի կոկորդին և նավակն սկսեց սուզվել: Հիմա ջուրը գլխովին ծածկում եր զինվորիկին: Նա մտածեց սքանչելի փոքրիկ պարուհու մասին, վորին այլևս վիճակված չեր տեսնել:

Նրա ականջների մեջ հնչում եր՝

Ափսոս քեզ, ափսոս, մարտիկ,

Մահ ե սպառնում քեզ:

Թուղթը թրջվեց, պատուկեց և զինվորիկը քիչ մնաց խեղդվեր, բայց նույն րոպեին մի մեծ ձուկ կուլ տվեց նրան:


Ախ, վորքան մոլթ եր նրա փորի մեջ: Այստեղ ավելի վատ եր քան կամրջակի տակ, և դրա հետ միասին այնքան նեղ եր: Բայց անագե զինվորիկը պահում եր իրեն կայուն—նա պառկել եր ամբողջ լերկարությամբ, սեղմելով հրացանը:

Զուկը նետվում եր այս ու այն կողմ և ամենաանլերևակայելի շարժումներն անում: Հետո հանդարտվեց, և հանկարծ կայծակի պես մի բան փայլեց: Շուրջը բոլորովին լուսավորվեց և մեկը բացականչեց՝

—Անագե զինվորիկը:

Զուկը բռնեցին, տարան շուկա, այնտեղ գնեցին նրան ու բերեցին խոհանոց, վորտեղ խոհարարուհին սուր դանակով ձղեց նրա փորը: Նա բռնեց զինվորիկի մեջքից լերկու մատով ու տարավ սենյակ, վորտեղ հավաքվեցին բոլոր տնեցիները նայելու զարմանալի մարդուկին, վորը ճանապարհորդութուն եր կատարել ձկան փորի մեջ: Բայց անագե զինվորիկը չհպարտացավ:

Նրան կանգնեցրին սեղանի վրա և ահա—ինչ ասես չի լինում աշխարհիս լերեսին,—զինվորիկն ընկավ նույն սենյակը, վորտեղ առաջ եր, և տեսավ նույն լերեխաներին: Խաղալիքներն առաջվա պես կանգնած էին սեղանի վրա, իսկ նրանց միջև նաև հրաշալի զղջակը՝ սքանչելի, փոքրիկ պարուհու հետ: Նա նույնպես ուղիղ կանգնած եր



մի վտաքի վրա, մյուսը բարձրացրած ողի մեջ, — նա ել
կաշուն եր: Յեվ դա այնքան ազդեց անագե զինվորիկի
վրա, վոր քիչ մնաց լաց լինի անագե արցունքով, բայց
չե վոր դա անհարմար կլիներ: Նա նայեց պարունուն,
սա նրան, բայց չերկուսով ել վոչինչ չասացին: Հանկարծ
փոքրիկներից մեկն առանց վորեւ պատճառի բռնեց զին-
վորիկին ու զցեց նրան վառվող վառարանի մեջ: Յերեկ
դա ծխախոտի տուփի բոբոն սովորեցրեց նրան:

Ձինվորիկը կանգնած եր լուսավորված պայծառ
բոցով, և նա սարսափելի շոգում եր, բայց դա կրակից
եր արդյոք, թե սիրուց, նա ինքն ել չգիտեր: Նրա վրայի
գուլները բոլորովին խոնացել ելին — տխրութունից
արդյոք, թե ճանապարհորդության ժամանակ ելին ջնջվել,
նույնպես վոչ վոք չգիտեր: Նա նայում եր փոքրիկ աղ-
ջրկան, սա ել նրան և նա զգում եր, վոր հալվում ե,
բայց դեռ ելի ուղիղ կանգնած եր, հրապանն ուսին: Հան-
կարծ սենյակի դուռը բացվեց, միջանցիկը վերցրեց պա-
րունուն և նա, թեթե ճախրելով, ընկավ վառարանի մեջ
ուղիղ անագե զինվորիկի մոտ, բոցավառվեց պայծառ
բոցով — և նա այլևս չկար:

Իսկ անագե զինվորիկը հալվեց, դարձավ մի գնդիկ,
և չերբ աղախինը մյուս ուրը հանում եր մոխիրը, նա
գտավ վառարանում անագե մի սրտիկ: Իսկ պարունուց
մնացել եր միայն վարդակը, այն ել ածուխի պես սևացել եր:



ՀՀ Ազգային գրադարան



NL0390055

187
457060407

1620

Г. АНДЕРСЕН
СТОЙКИЙ
ОЛОВЯННЫЙ СОЛДАТИК
ГИД. ССРА. КРЕВАН

839.815

Ц-58